Հաշվետվություն

Էրազմուս+ «Մանկավարժական կրթության փոխակերպումը հանուն կանաչ և թվային անցման Հայաստանում և Մոլդովայում» (T4GREEN) ազգային մակարդակի ծրագրի շրջանակներում Պորտուգալիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

Թամարա Սարգսյան – հանրակրթության վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետը՝ Պորտուգալիայի Կովիլյա քաղաք, Բեյրայի համալսարան, 2024 թվականի սեպտեմբերի 7-11-ը:

Հրավիրող կողմը՝ Պորտուգալիայի Բեյրայի համալսարան

Գործուղման նպատակը՝ Էրազմուս+ «Մանկավարժական կրթության փոխակերպումը հանուն կանաչ և թվային անցման Հայաստանում և Մոլդովայում» (T4GREEN) ազգային մակարդակի ծրագրի շրջանակներում Պորտուգալիայի Բեյրայի համալսարանում մասնակից կազմակերպությունների հետ մանկավարժների պատրաստման հարցերի ուսումնասիրություն:

Գործուղված պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, Կրթության զարգացման նորարարական ազգային կենտրոնի և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժակիան համալսարանի աշխատակիցներ:

Այցի ընթացքում հյուրընկալող, ինչպես նաև մասնակից համալսարանների կողմից ներկայացվեցին Եվրոպայի ուսուցչական կրթության քաղաքականությունները և ուսուցիչների շրջանում ինքնակարգավորվող ռազմավարությունների զարգացման մոտեցումները (SRSD): Բոնոյի համալսարանի կողմից ներկայացվեցին մանկավարժական նորարարությունների մոտեցումները և գործընկերային հանրույթների ձևավորման հարցերը: Էականորեն շեշտադրվեցին ապագա մանկավարժների կրթության հարցերում ուսուցման ակտիվ մեթոդների կիրառման, հատկապես պրոբլեմային և նախագծային ուսուցման փորձառությունները: Իսպանիայի Վալլադոլիդի համալսարանը ներկայացրեց ուսուցչական կրթության և աշխատաշուկայի հետ դրա արդյունավետ փոխկապակցման փորձառությունը:

Ամփոփելով քննարկվեցին այն ուղղությունները, որոնց ուսումնասիրությունը հատկապես կարևոր է Հայաստանի կրթական համակարգի տեսանկյունից և հետաքրքրություն կա առավել խորացնել գիտելիքներն այդ ուղղություններով մյուս պետությունների փորձառության վերաբերյալ: